

**ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ  
ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ.  
ՏՊԱԳԻՐ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԱՍՈՒԼԻ  
ՄՈՆԻԹՈՐԻՆԳ**

**ԿՈՎԿԱՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

*Գյուլիսանդանյան Էվելինա*

**ԵՐԵՎԱՆ 2009**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
Աղյուսակ 1. Հետազոտված մամուլը .....	4
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	5
ՄԻԱԶԱՓ ԵՎ ԵՐԿԶԱՓ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ .....	5
Աղյուսակ 2. Թեմաների քանակական և տոկոսային համամասնությունները .....	5
մոնիթորինգի ենթարկված թերթերում .....	5
Աղյուսակ 3.1. Հայկական մամուլում ամենահաճախ հանդիպող սուբյեկտները.....	6
որոնց նկատմամբ արտահայտված է որևէ տիպի վերաբերմունք.....	6
Աղյուսակ 3.2. Հատուկ հետաքրքրություն ներկայացնող սուբյեկտների.....	6
հանդիպման հաճախությունը .....	6
Աղյուսակ 4. Վերաբերմունքի տիպերը .....	7
Աղյուսակ 5. Վերաբերմունքի տիպերը հաշվարկված առանց հանդուրժողական հոդվածների.....	8
Աղյուսակ 6. Վերաբերմունքի տիպերը հաշվարկված առանց “հանդուրժողական հոդվածների”, “դրական վերաբերմունքի”, “դրական վերաբերմունքի ցիտում առանց մեկնաբանությունների” և առանց “դժվարանում եմ կողավորել” տարբերակների.....	9
Աղյուսակ 7. Որակական մաս. դիտարժան օրինակներ.....	10
Աղյուսակ 8. Իր հոդվածների մեջ ամենահանդուրժողականը մամուլը .....	12
Աղյուսակ 9. Յուրաքանչյուր առանձին մամուլում բացասական վերաբերմունքի, պիտակավորման, հեզմանքի, ծաղրի և անհանդուրժողական արտահայտություններ ցիտելու դեպքերը .....	12
Աղյուսակ 10. Յուրաքանչյուր մամուլում դրական վերաբերմունք, կանխակալ աջակցություն ի հաշիվ ուրիշի և առանց մեկնաբանությունների դրական վերաբերմունքի ցիտում պարունակող հոդվածների տոկոսը .....	13
Աղյուսակ 11. Յուրաքանչյուր առանձին մամուլում ամենահաճախ անդրադարձ ունեցող սուբյեկտները .....	14
Աղյուսակ 12. Յուրաքանչյուր առանձին վերաբերմունքի դեպքում ամենամեծ ցուցանիշ ունեցող սուբյեկտը .....	14
ԱՄՓՈՓՈՒՄ .....	16
ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	17
Մեթոդաբանությանն ուղղված երաշխավորություններ .....	17
ՁԼՄ-ներին ուղղված երաշխավորություններ և առաջարկներ.....	17
ՀԱՎԵԼՎԱԾ 1 .....	18
ՁԼՄ-ներում հանդուրժողականության մոնիթորինգի մեթոդոլոգիան.....	18
ՀԱՎԵԼՎԱԾ 2 .....	20
Մոնիթորինգի ենթարկված տպագիր լրատվամիջոցների ցանկը.....	20
Մոնիթորինգի ենթարկված էլեկտրոնային լրատվամիջոցների ցանկը.....	20

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### Ծրագրի նպատակը

Մամուլի և հեռուստատեսության մոնիթորինգի ՄԱԶԾ նախագիծը, որ իրականացրեց “Կովկասի ինստիտուտ” հիմնադրամը, ուղղված էր հայկական ՁԼՄ-ների հանդուրժողականության ուսումնասիրությանը: Նախագիծը խնդիր ուներ մշակել հայկական լրատվամիջոցներում հանդուրժողականության գնահատման գործիք դուրս բերել ՁԼՄ-ներում արտացոլված հանդուրժողականությանն առնչվող ամենասուր հիմնախնդիրները, ինչպես նաև բարձրացնել հասարակության և լրատվամիջոցների տեղեկացվածությունը հանդուրժողականության խնդիրների շուրջ և խրախուսել հասարակությանն անդրադառնալ հիմնախնդրին:

### Ծրագրի կառուցվածքը

Նախագիծը բաղկացած է երկու փուլից:

Նախագծի առաջին փուլում ուսումնասիրվեց տպագիր և ինտերնետային մամուլը: Երկրորդ փուլում նախատեսվում է ուսումնասիրել հեռուստամամուլը:

### Մեթոդոլոգիական հիմքերը

Ծրագրի ընթացքում Կովկասյան ինստիտուտը հիմնվեց 2008թ.-ի հոկտեմբեր 20-24-ը ՄԱԶԾ-ի կողմից կազմակերպած “Հանդուրժողականության մեդիա մոնիթորինգի մեթոդոլոգիա” սեմինարի ընթացքում առաջարկված մեթոդների և մոտեցումների վրա:

### Մոնիթորինգի ժամանակահատվածը

Իրականացվել է երկշաբաթյա մոնիթորինգ՝ երկու հաջորդական շաբաթ 2008թ.-ի նոյեմբերի 12-27-ը:

### Մոնիթորինգի սկզբունքները

Մոնիթորինգի ընթացքում հաշվի առնվել ոչ թե տեքստի բովանդակությունը, այլ ձևը՝ որքանով հանդուրժողական/անհանդուրժողական ձևով է գրված/ներկայացված նյութը:

Մամուլում հանդուրժողականությունն ուսումնասիրելու նպատակով որպես սկզբունք ընտրվել է անհանդուրժողական վերաբերմունքի մոնիթորինգը: Ընդ որում անհանդուրժողական վերաբերմունքն ունի երկու հիմնական դրսևորում՝ ներխամային ֆավորիտիզմ, որը դրսևորվում է բացահայտ արտահայտված դրական վերաբերմունքով կամ ի հաշիվ ուրիշի կանխակալ աջակցությամբ և արտախամային ագրեսիա, որը կարող է ունենալ այնպիսի դրսևորումներ ինչպիսին են ծաղրը, հեզնանքը, սպառնալիքը և այլն:

### Մամուլի ընտրությունը

*Ընտրանքը ներկայացուցչական չէ և ստացված տվյալները վերաբերում են միայն հետազոտված 10 անուն մամուլին՝ տվյալ ժամանակահատվածում: Արդյունքները չեն կարող տարածվել այլ մամուլի կամ այլ ժամանակային հատվածների վրա:*

Տպագիր մամուլի ընտրության դեպքում հաշվի է առնվել մամուլի տպաքանակը և լեզուն: Ընտրվել են առավել մեծ տպաքանակ ունեցող տպագիր այն թերթերը, որոնք ունեն նաև ինտերնետային կայք, ինչպես նաև մեկ ռուսալեզու թերթ:

Էլեկտրոնային մամուլի դեպքում ընտրանքը հաշվարկվել է համապատասխան վարկանիշի (cyrle.am կայքի ընթացիկ տվյալների հիման վրա).  
Ընթերցվել են յուրաքանչյուր թերթի բոլոր հոդվածները:

Արդյունքում ընտրանքային համախմբությունը կազմել են հետևյալ տպագիր և էլեկտրոնային թերթերը.

- Հայկական ժամանակ (օրաթերթ)
- Առավոտ (օրաթերթ)
- Հայաստանի Հանրապետություն (օրաթերթ)
- 168 ժամ (շաբաթական 3 անգամ)
- Новое время (շաբաթական 3 անգամ, ռուսալեզու)
  
- A1+ (էլեկտրոնային օրաթերթ)
- Armenia Today (էլեկտրոնային օրաթերթ, ռուսալեզու)
- Armenia Now (էլեկտրոնային, շաբաթական մեկ անգամ)
- Zhamanak.com (էլեկտրոնային օրաթերթ)
- Ազատամտություն (էլեկտրոնային օրաթերթ)

Ընդհանուր առմամբ հետազոտվել է 2347 հոդված 10 մամուլում:

**Աղյուսակ 1. Հետազոտված մամուլը**

Մամուլը	Հոդվածների քանակ	Տոկոս
Հայկական ժամանակ	301	12.8%
Առավոտ	206	8.8%
Հայաստանի Հանրապետություն	301	12.8%
168 ժամ	178	7.6%
Новое время	249	10.6%
A1+	315	13.4%
Armenia Today	250	10.7%
Armenia Now	26	1.1%
Zhamanak.com	224	9.5%
Ազատամտություն	297	12.7%
Ընդամենը	2347	100%

**Հետազոտված փոփոխականներ.** Մոնիթորինգի ընթացքում տեղեկատվություն է քաղվել հետևյալ փոփոխականների վերաբերյալ.

- *Հոդվածի թեման* (օր.՝ ՀՀ ներքին քաղաքականություն, տնտեսություն, կրթություն, պատմական իրողություններ և այլն)
- *Վերաբերմունքի տիպը* (այս դեպքում առանձնացվել են հանդուրժողական հոդվածները և որևէ ոչ հանդուրժողական վերաբերմունք պարունակող հոդվածները)
- *Վերաբերմունքի սուբյեկտը* (առանձնացվել են նաև այն սուբյեկտները, որոնց նկատմամբ գրանցվել է այս կամ այն տիպի վերաբերմունք)

Գործիքի նկարագրությունը մանրամասն տես հավելված 1:



## ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### ՄԻԱԶԱՓ ԵՎ ԵՐԿՉԱՓ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ, չնայած նրան, որ հետազոտված հոդվածների մեծամասնությունը չի պարունակում անհանդուրժողական որևէ արտահայտություն, այնուամենայնիվ հայկական տպագիր և էլեկտրոնային մամուլն այս օրերին հաճախ խիստ անհանդուրժողական է: Մա հատկապես ուշագրավ է, այն պարագայում, երբ մոնիթորինգի ենթարկված հոդվածագները առավելապես անդրադառնում են քաղաքական թեմաների: Միննույն ժամանակ, հետաքրքիր է այն, որ ուսումնասիրված մամուլն առաջին հերթին առավել անհանդուրժողական է տարբեր տիպի պետական կառույցների և նրանց ներկայացուցիչների հանդեպ: Իսկ անհանդուրժողականությունն առավել հաճախ դրսևորվում է ծաղրի, վիրավորանքի, պիտակավորման կամ հեզնանքի ձևով՝ դառնալով ծայրահեղ իր դրսևորումներում: Տարբեր սոցիալական (կրոնական, ազգային, գենդերային) խմբերի հանդեպ անհանդուրժողականությունը թեև մեծ տոկոս չի կազմում, այնուամենայնիվ ունի իր առանձնահատկությունը՝ հաճախ հանդես է գալիս քողարկված ձևով (տես էջ9): Ստորև բերված աղյուսակները ցույց են տալիս տարբեր փոփոխականների հանդիպման հաճախությունները և տարբեր փոփոխականների միջև բացահայտված կապերը:

Աղյուսակ 2-ում ցույց են տրված հոդվածների թեմաների քանակական և տոկոսային համամասնությունները մոնիթորինգի ենթարկված բոլոր թերթերում:<sup>1</sup>

Առավել մեծ տոկոս են կազմում անդրադարձերը ՀՀ ներքին քաղաքականությանը (33.2%):

#### **Աղյուսակ 2. Թեմաների քանակական և տոկոսային համամասնությունները մոնիթորինգի ենթարկված թերթերում**

Հոդվածի թեման	Քանակ	Տոկոս
ՀՀ ներքին քաղաքականություն	779	33.2%
ՀՀ սոցիալ-տնտեսական խնդիրներ	492	20.9%
Արտաքին աշխարհ, օտարերկյա քաղաքականություն	374	15.9%
Կենցաղ, հանցագործություն, քրեականություն	220	9.4%
Մայրոտ	216	9.2%
Ղարաբաղ, բանակցային գործընթացներ	181	7.7%
Պատմական իրողություններ	25	1.1%

<sup>1</sup> Մայրոտին առնչվող թեմաները մեծ տոկոս են կազմել, քանի որ մոնիթորինգի ժամանակահատվածում ՀՀ շախմատի հավաքականը մասնակցում էր միջազգային օլիմպիադային, և մամուլում մեծ էր անդրադարձը այս իրադարձությանը:

ՁԼՄ-ներ, լրագրողներ	11	0.5%
Այլ	32	1.4%
Դժվարանում եմ կողավորել	17	0.7%
<b>Ընդամենը</b>	<b>2347</b>	<b>100%</b>

Աղյուսակ 3.1-ում հաշվարկված են հայկական մամուլում ամենահաճախ հանդիպող սուբյեկտները, որոնց նկատմամբ արտահայտված է այս կամ այն տիպի վերաբերմունք: Ներառված են 3 -ից մեծ տոկոս ունեցող դեպքերը:

Մամուլում ամենաշատ անդրադարձ, որն է տիպի վերաբերմունքով, արվում է պետական կառույցներին:

**Աղյուսակ 3.1. Հայկական մամուլում ամենահաճախ հանդիպող սուբյեկտները, որոնց նկատմամբ արտահայտված է որևէ տիպի վերաբերմունք**

Սուբյեկտները Ամենահաճախ հանդիպող	Քանակ	Տոկոս
Պետական կառույցներ (ԱԺ, ՏԻՄ, կառավարություն/աշխատակիցներ)	156	21.6%
Իշխանություն/պրո-իշխանական ուժեր/կոալիցիա	120	16.6%
Սերժ Սարգսյան	75	10.4%
Հայաստան/հայեր/հայ ազգ/և այլն	65	9.0%
Ադրբեջանցիներ/Ադրբեջան	51	7.1%
Այլ	46	6.4%
կուսակցություններ/ներկայացուցիչներ/քաղաքական գործիչներ		
Ընդդիմություն	40	5.5%
Միջազգային կառույցներ/ՀԿ-ներ	37	5.1%
Ռուսներ/Ռուսաստան	35	4.9%
Լևոն Տեր-Պետրոսյան	24	3.3%
Այլ (դպրոցի/բիզնեսի/ կամ այլ ներկայացուցիչներ)	51	7.1%
Դժվար է կողմնորոշվել	21	2.3%

Ինչպես կարող ենք տեսնել աղյուսակ 3.2-ից, սոցիալական տարբեր խմբերի (կրոնական, ազգային, գենդերային) նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի տոկոսը մամուլում քիչ է:

Մամուլի հանդեպ ոչ հանդուրժողական վերաբերմունքը կազմում է 2.1% (0.1%+2%):

**Աղյուսակ 3.2. Հատուկ հետաքրքրություն ներկայացնող սուբյեկտների հանդիպման հաճախությունը**

Սուբյեկտները Թիրախային սուբյեկտներ	Քանակ	Տոկոս
Սոցիալական տարբեր խմբեր		
Քրդեր, եզդիներ	1	0.1%
Այլ ազգային փոքրամասնություններ	1	0.1%

Այլ ավանդական կրոններ	2	0.2%
Ոչ ավանդական կրոնական կազմակերպություններ	1	0.1%
Մեռական փոքրամասնություններ	-	-
Կանայք	5	0.5%
Տղամարիկ	1	0.1%
Մահմանափակ կարողություններով մարդիկ	3	0.3%
<i>Գումարային</i>	<i>13</i>	<i>1.4%</i>
Մամուլ		
Ա.1+	1	0.1%
Այլ մամուլ	19	2.0%
<i>Գումարային</i>	<i>20</i>	<i>21.1%</i>

Աղյուսակ 4-ում հաշվարկված են վերաբերմունքի տիպերը, որտեղ բոլորից մեծ տոկոս են կազմում այն հոդվածները, որոնցում չի գրանցվել և ոչ մի վերաբերմունք:

Մեր մամուլում ամենահաճախ հանդիպող անհաղորժողական վերաբերմունքի տիպն է “պիտակավորում, հեզնանք, ծաղր, վիրավորանք” (15%), մեծ տոկոս է կազմում նաև բացասական վերաբերմունքը՝ “նրանց”՝ ոչ մերի բացասական կերպարի ստեղծումը (10%): Շատ են նաև դեպքերը, երբ ոչ թե լրագրողն է արտահայտում որևէ կանխակալ կարծիք, այլ ցիտում է իրեն հարմար, իր համար նպաստավոր աղբյուրից՝ առանց մեկնաբանելու (7.2%): Այս երևույթը գրականության մեջ անվանվում է *արտահայտման ազրեսիա*:

#### Աղյուսակ 4. Վերաբերմունքի տիպերը

<i>Վերաբերմունքի տիպը</i>	<i>Քանակ</i>	<i>Տոկոս</i>
Ողջ հոդվածը հանդուրժողական է	1746	59.3%
Դրական վերաբերմունք	83	2.8%
Կանխակալ աջակցություն ի հաշիվ ուրիշի	59	2.0%
Խտրականություն	7	.2%
Բացասական վերաբերմունք <sup>2</sup>	293	10.0%
Պիտակավորում, հեզնանք, վիրավորանք, ծաղր	440	15.0%
Մպառնալիք, կոչեր ուղղված բռնությանը, խտրականությանը	1	.0%
Այս կամ այն խմբին/անդամին ուղղված մեղադրանք հասարակության, պետության վրա բացասական ազդեցության շուրջ/ իշխանությունը գավթելու կամ այլ տիպի մեղադրանք	42	1.4%

<sup>2</sup> այս կամ այն խմբի բացասական կերպարի ստեղծում (գուգակցված չեն կոնկրետ մեղադրանքներով, որոնց վերաբերում են մյուս կետերը)

Խտրականությունն ու հանցագործությունն արդարացնող արտահայտություններ	1	.0%
Անհանդուրժողական արտահայտությունների ցիտում առանց մեկնաբանությունների	212	7.2%
Դրական վերաբերմունքի ցիտում առանց մեկնաբանությունների	58	2.0%
Այլ	.0	.0%
Դժվարանում եմ կողավորել	1	.0%
<b>Ընդամենը</b>	<b>2943</b>	<b>100%</b>

Աղյուսակ 5-ում հաշվարկված է վերաբերմունքի տիպերն առանց հանդուրժողական հոդվածների.

**Աղյուսակ 5. Վերաբերմունքի տիպերը հաշվարկված առանց հանդուրժողական հոդվածների**

<i>Վերաբերմունքի տիպերը հաշվարկված առանց հանդուրժողական հոդվածների</i>	<i>Քանակ</i>	<i>Տոկոս</i>
Դրական վերաբերմունք	83	6.9%
Կանխակալ աջակցություն ի հաշիվ ուրիշի	59	4.9%
Խտրականություն	7	.6%
Բացասական վերաբերմունք	293	24.5%
Պիտակավորում, հեզմանք, վիրավորանք, ծաղր	440	36.8%
Մպառնալիք, կոչեր ուղղված բռնությանը, խտրականությանը	1	.1%
Այս կամ այն խմբին/անդամին ուղղված մեղադրանք հասարակության, պետության վրա բացասական ազդեցության շուրջ/ իշխանությունը զավթելու կամ այլ տիպի մեղադրանք	42	3.5%
Խտրականությունն ու հանցագործությունն արդարացնող արտահայտություններ	1	.1%
Անհանդուրժողական արտահայտությունների ցիտում առանց մեկնաբանությունների	212	17.7%
Դրական վերաբերմունքի ցիտում առանց մեկնաբանությունների	58	4.8%
Դժվարանում եմ կողավորել	1	.1%
<b>Ընդամենը</b>	<b>1197</b>	<b>100%</b>



Աղյուսակ 6-ում հաշվարկված են վերաբերմունքի տիպերը առանց հանդուրժողական հոդվածների, դրական վերաբերմունքի, առանց կանխակալ աջակցություն ի հաշիվ ուրիշի և առանց դրական մեջբերումների, ինչպես նաև առանց դժվարանում եմ պատասխանել տարբերակի՝ այսինքն՝ միայն բացասական հենք ունեցող անհանդուրժողական վերաբերմունքի տիպերը:

**Աղյուսակ 6. Վերաբերմունքի տիպերը հաշվարկված առանց “հանդուրժողական հոդվածների”, “դրական վերաբերմունքի”, «կանխակալ աջակցություն ի հաշիվ ուրիշի», “դրական վերաբերմունքի ցիտում առանց մեկնաբանությունների” և առանց “դժվարանում եմ կողավորել” տարբերակների**

Վերաբերմունքի տիպերը	Քանակ	Տոկոս
Խտրականություն	7	0.7%
Բացասական վերաբերմունք	293	29.4%
Պիտակավորում, հեզմանք, վիրավորանք, ծաղր	440	44.2%
Սպառնալիք, կոչեր ուղղված բռնությանը, խտրականությանը	1	0.1%
Այս կամ այն խմբին/անդամին ուղղված մեղադրանք հասարակության, պետության վրա բացասական ազդեցության շուրջ/ իշխանությունը զավթելու կամ այլ տիպի մեղադրանք	42	4.2%
Խտրականությունն ու հանցագործությունն արդարացնող արտահայտություններ	1	0.1%
Անհանդուրժողական արտահայտությունների ցիտում առանց մեկնաբանությունների	212	21.3%
<b>Ընդամենը</b>	<b>992</b>	<b>100%</b>

Աղյուսակ 7. Այս աղյուսակում բերված են մեջբերումներ, որոնք տեղեկատվության որակական վերլուծության հնարավորություն են ընձեռում:

Այս առումով հետաքրքիր են անհանդուրժողականության քողարկված դրսևորումները: Օրինակ՝ հոդվածներից մեկում կողավորողները հանդիպել են “տերպետրոսյանական աղանդ” արտահայտությանը: Սա մի կողմից ունի անհադուրժողական քաղաքական ենթատեքստ, մյուս կողմից՝ անհադուրժողական է կրոնական կազմակերպությունների հանդեպ<sup>3</sup>: Նման դեպքերը, երբ անհադուրժողական է ոչ թե հոդվածը կամ միտքը, այլ անհանդուրժողականությունը քողարկված է մեկ արտահայտությամբ, կարող են ևս մեծ ազդեցություն են ունենալ լսարանի վրա՝ անուղղակի կերպով որոշակի վերաբերմունք ձևավորելով ընթերցողի մոտ:

<sup>3</sup> “Աղանդ” բառը նշանակում է շեղում, ուստի վիրավորական է այն կիրառել կրոնական կազմակերպությունների նկատմամբ.

**Աղյուսակ 7. Որակական մաս. դիտարժան օրինակներ**

Վերաբերմունքի տիպերը	Դիտարժան օրինակներ
Կանխակալ աջակցություն ի հաշիվ ուրիշի	<p>Երկրներ, որոնց մի մասը նույնիսկ գոյություն չեն ունեցել այն ժամանակ, երբ Հայաստանում արդեն գործում էին անվանի բժիշկներ ու գրվում բժշկական մատյաններ: Աշխարհում քիչ ազգեր կան, որոնք կարող են հպարտանալ գիտական գրավոր այնպիսի հուշարձաններով, ինչպիսիք են Մխիթար Հերացու՝ 12-րդ դարում գրած «Ջերմանց մխիթարություն» գիրքը և Ամիրդովլաթ Ամասիացու՝ 15-րդ դարում գրած ստվարածավալ աշխատությունները:</p> <p style="text-align: right;">Ազատամտություն 28.11.2008</p>
Խտրականություն	<p style="text-align: right;"><i>Եզդիների նկատմամբ</i></p> <p>«Նրանք անպատվաբեր են համարում, երբ իրենց կանայք հյուրասիրում են տղամարդ հյուրին: Նույնիսկ սուրճը տղամարդիկ են մատուցում: Նման պարագայում ես ինչպե՞ս կարող եմ թույլ տալ, որ նրանք իմ տուն գան, իսկ իմ կինը կամ աղջիկը հյուրասիրի նրանց»:</p> <p style="text-align: right;">Ազատամտություն 22.11.08</p> <p style="text-align: right;">Ուղղված ընդդիմությանը և կանանց</p> <p><i>Հողվածի վերնագիրը՝ “Թե կնոջը ասպարեզ տաս”</i></p> <p>Կրթերը գնալով թեժանում էին, մասնակիցներն արդեն իրենց զգում էին «կնանիքով հավաքված զրույց անելիս»։ (Խոսքը ընդդիմադիր հանրահավաքի մասնակից կանաց մասին է)</p> <p style="text-align: right;">Ազատամտություն 27.11.08</p>
Բացասական վերաբերմունք	<p>Ինձ միշտ զարմացրել է, որ իշխանության կողմից մատուցվող «իրավագիտությունը» խիստ հակասության մեջ է մտնում թե՛ բարոյական նորմերի եւ թե՛ պարզ մարդկային տրամաբանության հետ: Այսինքն՝ դու ակնհայտորեն տեսնում ես, որ մաժուրը սպիտակ է, բայց «իրավունքի պրոֆեսիոնալները», ռստիկանություն-դատախազություն-դատարան չկտրվող «հոսքագծի մշակները» այնքան են զուլիսդ տանում մասնագիտական տերմիններով եւ տարբեր օրենքների ու կետերի հղումներով, որ մտածում ես՝ գուցե իսկապես, իրավապահների տեսանկյունից, մաժուրը սե՛ւ է:</p> <p style="text-align: right;">Ազատամտություն 27.11.08</p>
Պիտակավորում, հեզնանք, վիրավորանք, ծաղր	<p style="text-align: right;"><i>Ուղղված տարբեր պետական կառույցների ներկայացուցիչներին</i></p> <p>Ա. Մահտեսյանի հրապարակային կեցվածքից երեւում է, որ դատարկ, ստախոս, անսկզբունք մենք է:</p> <p style="text-align: right;">Հայկական ժամանակ 22.11.2008</p> <p>Շոթայի առաջին օղակն ու գլխավոր տականքը Արթուր Մարտյանն է՝ ռստիկանության նախկին կապիտան ...</p> <p style="text-align: right;">Ազատամտություն 21.11.08</p> <p>“Նալբանդյանի մակարդակը չի անցնում էշի պոչից”</p> <p style="text-align: right;">Ա1+ 22.11.2008</p> <p>Ապշել կարելի է միայն պատգամավոր կոչվածի նմանօրինակ անգրագետ խոսքից, ... Կամ Նիկոյանը լրիվ գծվել է ու ամեն տեսակի անհեթեթություններ է դուրս տալիս ... Կամ հարբած է եղել ու չի հասկացել, թե ինչ է խոսում, թե՛ն, խոսքի կառուցվածքը հաշվի առնելով, կարելի է ասել, որ հարբածներն ավելի խոսքաշեն են լինում երբեմն:</p> <p style="text-align: right;">Ազատամտություն 21.11.08</p> <p style="text-align: right;"><i>Ուղղված այլ պետություններին/իշխանություններին</i></p> <p>Մակայն բանն այն է, որ քաղաքական դեռահասության տարիքում գտնվող Սահակաշվիլին՝ իր թիմի հետ միասին, ձգվեց դեպի Վաշինգտոն...</p> <p style="text-align: right;">Առավոտ 29.11.2008</p> <p>Глава турецкого правительства, видимо, от распирающей его самоуверенности стал рассказывать аудитории, что в...</p> <p style="text-align: right;">Новое время 18.11.2008</p> <p>... наш противник, избавившись от амбиций мировой нефтяной державы, вынужден будет вести себя скромнее и уступчивее.</p> <p style="text-align: right;">Новое время 18.11.2008</p>

	<p>Учитывая мудрость азербайджанского руководства, может, имело бы смысл пригласить их в зоны абхазского и осетинского конфликтов?                  Armenia Today 23.11.08</p> <p>Հետևաբար, Բարձրի այժմյան պահվածքը խիստ հիշեցնում է որոշ միջատների պահվածք, երբ վերջինները, հայտնվելով մահացու վտանգի առաջ, «սուտուեռուկ» են տալիս այդպիսով փորձելով, գոնե, չգրգռել առավել գորեղ հակառակորդին:                  Ազատամտություն 22.11.08  <i>Ուղղված մամուլին</i></p> <p>Հայաստանում բոլորը չեն «Հայրուրի» հարիճներ, որ բերանները բաց լսեն նման գլուխհարթուկոցիներ:                  Հայկական ժամանակ 22.11.2008</p> <p>Однако азербайджанский журналист Гасанов, косящий под комика-аналитика, идет от “общего к частному”.                  Новое время 22.11.2008</p> <p>Մասնավորապես, լրագրողներից մեկը կարծիք էր հայտնել, թե... (համաձայնեք, առավել մեծ հիմարություն, նույնիսկ մեծագույն ցանկության դեպքում, հորինել անգամ հնարավոր չէ):                  Ազատամտություն 21.11.08  <i>Ուղղված հասարակական շարժումներին</i></p> <p>Организации (инициатива “Миацум”), взявшей на себя “почетную” миссию торпедировать якобы “пораженческую” политику руководства страны в карабахском вопросе...                  Новое время 20.11.2008  <i>Ուղղված Սերժ Սարգսյանին</i></p> <p>Այն, որ Սերժիկ Սարգսյանը սարսափահար է արդեն մեկ տարի՝ բոլորս էլ գիտենք:                  Zhamanak.com 29.11.08                  Ուղղված ընդդիմությանը և քողարկված ձևով կրոնական կազմակերպություններին</p> <p>Մասնավորապես, պետք է ակնկալել տերպետրոսյանական աղանդի դիրքերի հզորացում: Եվ, իհարկե, նկատի առնելով այդ ոչ պակաս կարևոր գործոնը՝ անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր միջոցները, որպեսզի թույլ չտանք եվրոպականորեն տրամադրված հասարակայնությունն ընկնի Տեր-Պետրոսյանի ու նրա տոտալիտար աղանդի ազդեցության տակ:                  Ազատամտություն 22.11.08                  Ուղղված Լևոն Տեր-Պետրոսյանին</p> <p>Որովհետև հավատացած եմ եղել, որ նա ի ծնե սրիկա է: ...Ես ազնիվ ապրել եմ և, անհրաժեշտության դեպքում, անգամ կախաղանի սպառնալիքի տակ կկրկնեմ՝ Լևոնը սրիկա էություն է:                  Ազատամտություն 26.11.08</p>
<p>Այս կամ այն - խմբին/անդամին ուղղված մեղադրանք հասարակության, պետության վրա բացասական ազդեցության շուրջ/ իշխանությունը զավթելու կամ այլ տիպի մեղադրանք</p>	<p>Եվրամիության և Հայաստանի գործող իշխանությունների միջև կնքված վերջին համաձայնագրերից մեկը ուղղակի սպառնույթ է այն բանի, որ ԵՄ-ն Հայաստանի նկատմամբ ռասիստական վերաբերմունք ունի:                  Հայկական ժամանակ 27.11.2008</p> <p>Пользуясь попустительством грузинских властей — как духовных, так и светских, — хулиганствующий священнослужитель продолжает бряцать оружием.                  Новое время 20.11.2008</p> <p>Таким образом, вновь продемонстрирован тот очевидный факт, что грузинские власти предпринимают и предпримут любой зависящий от них шаг для того, чтобы нынешние армянские политзаключенные Грузии оказались на свободе как можно позже. Только наивные не понимают, что это уже война, а на войне врага ни в коем случае не прощают и не милуют.                  Armenia Today 17.11.08</p>

Աղյուսակ 8-ը ցույց է տալիս թե որ թերթն է իր հոդվածների մեջ ամենահանդուրժողականը, երբ գրանցված չեն եղել անհանդուրժողականությանն առնչվող դեպքեր: Ընդ որում, հիշենք, որ կողավորելիս հաշվի է առնվել ոչ թե տեքստի բովանդակությունը, այլ ձևը, այսինքն՝ աղյուսակ 8-ում բերված հոդվածները հանդուրժողական են ձևով, մինչդեռ բովանդակությամբ կարող են և այդպիսին չլինել: Այստեղ, ևս մեկ անգամ, պետք է հատուկ ուշադրություն դարձնել, այն հանգամանքին, որ տվյալներն արտացոլում են միայն նոյեմբեր 12-ից 27-ը ընկած ժամանակահատվածում մամուլում տեղ գտած արդյունքները:

**Աղյուսակ 8. Իր հոդվածների մեջ ամենահանդուրժողականը մամուլը**

Մամուլը Իր հոդվածների մեջ ամենահանդուրժողականը	Տոկոս
Հայաստանի Հանրապետություն	83.3%
Ա1+	75.4%
Новое время	75.1%
Armenia Today	67.7%
168 ժամ	57.4%
Հայակական ժամանակ	51.0%
Ազատամտություն	48.1%
Armenia Now	43.8%
Առավոտ	42.0%
Zhamanak.com	41.9%

Աղյուսակ 9. Յուրաքանչյուր մամուլում բացասական վերաբերմունքի, պիտակավորման, հեզմանքի, ծաղրի և անհանդուրժողական արտահայտություններ ցիտելու տոկոսները.

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Armenia Now-ի դեպքում, մոնիթորինգի ենթարկված ժամանակահատվածում, ընդհանրապես չեն հանդիպել ծաղրի, վիրավորանքի, պիտակավորման կամ հեզմանքի դեպքեր, սակայն միևնույն ժամանակ Armenia Now-ում ցածր է հանդուրժողական հոդվածների տոկոսը: Սրա բացատրությունն այն է, որ Armenia Now-ի դեպքում մեծ տոկոս են կազմում ասենք բացասական վերաբերմունքը (15.6%), անհանդուրժողական արտահայտությունների ցիտումը (15.6%), կամ, ինչպես երևում է հաջորդ աղյուսակու՝ դրական վերաբերմունքի կամ դրական վերաբերմունք առանց մեկնաբանությունների ցիտելու տոկոսները:

**Աղյուսակ 9. Յուրաքանչյուր առանձին մամուլում բացասական վերաբերմունքի, պիտակավորման, հեզմանքի, ծաղրի և անհանդուրժողական արտահայտություններ ցիտելու դեպքերը**

Մամուլը	Տոկոս Բացասական	Տոկոս Պիտակավորում,	Տոկոս Անհանդուրժողական
---------	--------------------	------------------------	---------------------------

	վերաբերմունք	հեզմանք, վիրավորանք, ծաղր	արտահայտությունների ցիտում առանց մեկնաբանությունների
Ա1+	4.6%	8.4%	9.0%
Հայաստանի Հանրապետություն	1.6%	1.9%	1.9%
Новое время	7.1%	8.2%	3.6%
Ազատամտություն	15.8%	20.0%	5.8%
Armenia Today	8.4%	8.4%	4.0%
Հայկական ժամանակ	13.6%	22.1%	7.2%
Zhamanak.com	14.5%	25.6%	8.4%
168 ժամ	9.1%	19.1%	8.7%
Առավոտ	10.8%	19.0%	15.9%
<b>Armenia Now</b>	<b>15.6%</b>	<b>-</b>	<b>15.6%</b>

Աղյուսակ 10. Յուրաքանչյուր մամուլում դրական վերաբերմունք, կանխակալ աջակցություն և առանց մեկնաբանությունների դրական վերաբերմունքի ցիտում պարունակող հոդվածների տոկոսը.

Վերաբերմունքի տիպերը դիտարկելիս հետաքրքիր է ներխուժային ֆավորիտիզմի ֆենոմենը մամուլում, երբ անհանդուրժողականությունը դրսևորվում, արտահայտվում է ոչ թե բացասական ձևակերպումներով, այլև խիստ ընդգծված դրական: Այսինքն, դիմացինի, ուրիշի հանդեպ անհանդուրժողական լինելիս կարելի է նաև խիստ ընդգծված դրական վերաբերմունք արտահայտել կամ գովաբանել մեզ, մերը, մերոնց:

**Աղյուսակ 10. Յուրաքանչյուր մամուլում դրական վերաբերմունք, կանխակալ աջակցություն ի հաշիվ ուրիշի և առանց մեկնաբանությունների դրական վերաբերմունքի ցիտում պարունակող հոդվածների տոկոսը**

Մամուլը	Տոկոս դրական վերաբերմունք	Տոկոս կանխակալ աջակցություն այլոց հաշվին	Դրական վերաբերմունք ի ցիտում առանց մեկնաբանությ ունների
Ա1+	1.2%	0.3%	-
168 ժամ	0.9%	2.2%	1.7%
Zhamanak.com	1.5%	2.7%	1.2%
Հայկական ժամանակ	2.3%	2.1%	1.0%
Ազատամտություն	2.6%	2.6%	1.6%
Новое время	4.3%	1.1%	-
Հայաստանի Հանրապետություն	4.2%	1.0%	5.8%
Armenia Today	4.0%	2.7%	3.0%
Առավոտ	4.1%	3.4%	3.4%
<b>Armenia Now</b>	<b>9.4%</b>	<b>3.1%</b>	<b>6.2%</b>

Աղյուսակ 11-ում հնարավոր է տեսնել այն սուբյեկտներին, որոց ամենահաճախ անդրադարձն են կատարել թերթերը՝ ցուցաբերելով այս կամ այն տիպի վերաբերմունք:

**Աղյուսակ 11. Յուրաքանչյուր առանձին մամուլում ամենահաճախ անդրադարձ ունեցող սուբյեկտները**

Մամուլը	Սուբյեկտը	Տոկոս
Հայակական ժամանակ	Պետական կառույցներ	24.2%
Առավոտ	Պետական կառույցներ	25.4%
Հայաստանի Հանրապետություն	Հայաստան/հայեր	23.4%
168 ժամ	Պետական կառույցներ	18.9%
Новое время	Ադրբեջան/ադրբեջանցիներ	20.4%
Ա1+	Պետական կառույցներ	31.9%
Armenia Today	Իշխանություններ/պրոիշխանական ուժեր	17.6%
Armenia Now	Ադրբեջան/ադրբեջանցիներ Իշխանություններ/պրոիշխանական ուժեր Պետական կառույցներ	20.0%
Zhamanak.com	Իշխանություններ/պրոիշխանական ուժեր	20.1%
Ազատամտություն	Իշխանություններ/պրոիշխանական ուժեր	7.3%

Աղյուսակ 12-ը ցույց է տալիս յուրաքանչյուր առանձին վերաբերմունքի դեպքում որ սուբյեկտն է, որ ունի առավել մեծ տոկոսը: Նաև առանձին դիտարկված են ”իշխանությունը”, “ընդդիմությունը”, “Ս. Սարգսյանը” և “Լ. Տեր-Պետրոսյանը”: Այստեղ հետաքրքիր է “քավության նոխազի” ֆենոմենը: Մամուլում հաճախ հանդիպում ենք հստակ արտահայտված “մենք-մերոնքը” ի հակադրություն “նրանք-նրանցին”, սակայն կան սուբյեկտներ, ում նկատմամբ մամուլը անհաղորժողական է, և որոնք ոչ “մենք” են, ոչ էլ՝ “նրանք”. “ոչ ոքինը” (ռուսերեն՝ “ни чьи”): Եվ դիտարժան է, որ մեր մամուլում այս դերում առավել հաճախ հանդես են գալիս պետական կառույցները, ՏԻՄ-երը և նրանց ներկայացուցիչները: Բացասական վերաբերմունքի, հեզմանքի, ծաղրի և այլն ամենամեծ բաժինը մամուլում բաժին է ընկնում հենց պետական կառույցներին, ՏԻՄ-երին դրանց ներկայացուցիչներին:

**Աղյուսակ 12. Յուրաքանչյուր առանձին վերաբերմունքի դեպքում ամենամեծ ցուցանիշ ունեցող սուբյեկտը**

Վերաբերմունքի տիպերը Ամենամեծ ցուցանիշներ	Սուբյեկտը	Քանակը	Տոկոսը Դրական դրաբերմունքի մեջ
--	-----------	--------	---

Դրական վերաբերմունք	<b>Հայաստան, հայեր</b>	<b>19</b>	<b>22.9%<sup>4</sup></b>
	Իշխանություն	4	4.8%
	Ընդդիմություն	6	7.2%
	Ս. Սարգսյան	10	12.0%
	Լ. Տեր-Պետրոսյան	5	6.0%
Կանխակալ աջակցություն ի հաշիվ ուրիշի	<b>Ընդդիմություն</b>	<b>12</b>	<b>20.3%</b>
	Իշխանություն	4	6.8%
	Ս. Սարգսյան	3	5.1%
	Լ. Տեր-Պետրոսյան	4	6.8%
Խտրականություն	<b>Կանայք</b>	<b>2</b>	<b>28.6%</b>
Բացասական վերաբերմունք	<b>Պետական կառույցներ</b>	<b>61</b>	<b>20.8%</b>
	Իշխանություն	44	15.0%
	Ընդդիմություն	12	4.1%
	Ս. Սարգսյան	26	8.9%
	Լ. Տեր-Պետրոսյան	5	1.7%
Պիտակավորում, հեզանք, վիրավորանք, ծաղր	<b>Պետական կառույցներ</b>	<b>91</b>	<b>20.7%</b>
	Իշխանություն	52	11.8%
	Ընդդիմություն	18	4.1%
	Ս. Սարգսյան	34	7.7%
	Լ. Տեր-Պետրոսյան	14	3.2%
Սպառնալիք, կոչեր ուղղված բռնությանը, խտրականությանը	<b>Աղբբեջան/աղբբեջանցի</b>	<b>1</b>	<b>100%</b>
Այս կամ այն խմբին/անդամին ուղղված մեղադրանք հասարակության, պետության վրա բացասական ազդեցության շուրջ/ իշխանությունը զավթելու կամ այլ տիպի մեղադրանք	<b>Պետական կառույցներ</b>	<b>12</b>	<b>28.6%</b>
	Իշխանություն	6	14.3%
	Ընդդիմություն	-	-
	Ս. Սարգսյան	1	2.4%
	Լ. Տեր-Պետրոսյան	1	2.4%
Խտրականությունն ու հանցագործությունն արդարացնող արտահայտություններ	<b>Այլ ազգեր/պետություններ</b>	<b>1</b>	<b>100%</b>
Անհանդուրժողական արտահայտությունների ցիտում առանց մեկնաբանությունների	<b>Իշխանություն</b>	<b>34</b>	<b>16.0%</b>
	Պետական կառույցներ	33	15.6%
	Ընդդիմություն	4	1.9%
	Ս. Սարգսյան	13	6.1%
	Լ. Տեր-Պետրոսյան	2	0.9%
Դրական վերաբերմունքի ցիտում առանց մեկնաբանությունների	<b>Հայաստան, հայեր</b>	<b>11</b>	<b>19.0%</b>
	Իշխանություն	-	-
	Ընդդիմություն	2	3.4%
	Ս. Սարգսյան	8	13.8%
	Լ. Տեր-Պետրոսյան	1	1.7%

<sup>4</sup> Միևնույն ժամանակ հայերի նկատմամբ բացասական վերաբերմունքը կազմում է 2,0 %, իսկ պիտակավորման, ծաղրի կամ հեզանքի դեպքերը՝ 4.3%. գումարային՝ 6.3%:

## ԱՄՓՈՓՈՒՄ

“Հանդուրժողականությունը հայկական ՁԼՄ-ներում. մամուլի և հեռուստատեսության մոնիթորինգ” ծրագրի արդյունքները ցույց տվեցին, որ հայկական տպագիր և էլեկտրոնային թերթերում հոդվածներն այսօր հաճախ պարունակում են տարբեր տիպի անհանդուրժողական վերաբերմունք տարբեր սուբյեկտների նկատմամբ:

Ընդհանուր առմամբ մոնիթորինգի հիմնական եզրահանգումները հետևյալն են.

1. Հետազոտված մամուլում զետեղված հոդվածների կեսին ավելին հանդուրժողական են և չեն պարունակում այս կամ այն սուբյեկտի հանդեպ որևէ տիպի վերաբերմունք (59.3%):
2. Այնուամենայնիվ, մամուլում մեծ թիվ են կազմում վիրավորանք, ծաղր, կամ հեզնանք պարունակող հոդվածները (15.0%):
3. Հետազոտված մամուլում հանդուրժողական հոդվածների ամենամեծ չափաբաժինն ունեն Հայաստանի Հանրապետություն (83.3%), Ա1+ (75.4%) և Новое время (75.1.0%) թերթերը:
4. Պիտակավորման, ծաղրի, վիրավորանքի կամ հեզնանքի դեպքերն ամենահաճախը հանդիպում են Zhamanak.com (25.6%), իսկ նման դեպքեր ընդհանրապես չեն հանդիպում Armenia Now էլեկտրոնային մամուլում:
5. Մամուլում բոլոր սուբյեկտներից առավել հաճախ ծաղրի, վիրավորանքի, հեզնանքի դեպքերն ուղղվում են պետական կառույցներին (20.7%):
6. Նշված սուբյեկտների շարքում Սերժ Սարգսյանը ամենահաճախը հիշատակվում է “դրական վերաբերմունքի՝ առանց մեկնաբանությունների ցիտումներով” (13.8%), Լևոն Տեր-Պետրոսյանը՝ “կանխակալ աջակցություն ի հաշիվ ուրիշի” վերաբերմունքով (6.8%), իշխանությունը՝ “անհանդուրժողական արտահայտությունների ցիտում առանց մեկնաբանությունների” (16.0%), ընդհիմությունը՝ “կանխակալ աջակցություն ի հաշիվ ուրիշի” (20.3%):<sup>5</sup>
7. Մամուլում առկա են դեպքեր, երբ տարբեր սոցիալական խմբերի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքը արտայատվում է ոչ բացայատ, այլ քողարկված ձևով:

<sup>5</sup> Հետևյալ վերաբերմունքերը և ցուցանիշները համեմատելի են միմյանց հետ



## ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### *Մեթոդաբանությանն ուղղված երաշխավորություններ*

Մամուլի պիլոտային մոնիթորինգի, ինչպես նաև գործիքը՝ ծրագրի փորձագետներ Դիանա Միրոյուբովայի և Իոսիֆ Ջիալոշինսկու հետ քննարկման արդյունքում նպատակահարմար է կատարել որոշ փոփոխություններ գործիքում, մասնավորապես՝

1. “Այլ” տարբերակում ընդգրկել բոլոր այն սուբյեկտները, որոնց հանդիպման հաճախությունը փոքր է 3%-ից. բացառությամբ հատուկ հետաքրքրություններ կայացնող դեպքերի.
2. Առանձնացնել “Ղարաբաղցիներ” և “Ղարաբաղի իշխանություններ” տարբերակները
3. Որպես առանձին սուբյեկտ ավելացնել “Արևմուտքը”
4. Քանի որ, մեծ տոկոս են կազմում “պետական կառույցները”, ապա նպատակահարմար է, առանձնացնել հետևյալ ենթախմբերը՝ “ԱԺ”, “ՏԻՄ”, “Կառավարություն”, “Ուժային կառույցներ” արժեքները:
5. Կոնկրետ հետազոտական նպատակներից ելնելով կարելի է նաև մասնատել “հետազոտության թեմաները”:
6. “Այլ” տարբերակում միավորել “խտրականություն”, “սպառնալիք, կոչեր ուղղված բռնությանը, խտրականությանը”, “խտրականությունն ու հանցագործությունն արդարացնող արտահայտություններ” տարբերակները՝ նրանց հազվադեպ հանդիպելու պատճառով:

### *ՁԼՄ-ներին ուղղված երաշխավորություններ և առաջարկներ*

1. Հաշվի առնելով ստացված վիրավորանքի, ծաղրի, հեզնանքի և պիտակավորման դեպքերի մտահոգիչ բարձր ցուցանիշը՝ անհրաժեշտ է, որպեսզի լրագրողները և հոդվածագիրները նյութ պատրաստելիս հատկապես խուսափեն անհանդուրժողական արտահայտություններ կիրառելուց:
2. Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել առանց մեկնաբանությունների անհանդուրժողական ցիտումներին, փորձել մեկնաբանել դրանք:
3. Ջերժ մնալ քողարկված ձևով “այլ” խմբերին վիրավորելուց:

## ՁԼՄ-ներում հանդուրժողականության մոնիթորինգի մեթոդաբանական

### Գործիքի նկարագրություն

Յուրաքանչյուր կողավորող, կարդալով թերթի հոդվածները, նախապես մշակված կողավորման թերթիկ է մուտքագրել տեղեկատվությունը հետևյալ փոփոխականների վերաբերյալ:

- Մամուլի անունը
- Ամսաթիվը
- Հոդվածի թեման
- Վերաբերմունքի տիպը
- Վերաբերմունքի սուբյեկտը

Հոդվածի թեման ներառում է հետևյալ արժեքները.

1. ՀՀ ներքին քաղաքականություն, միջազգային հարաբերություններ
2. օտարերկյա քաղաքականություն, արտաքին աշխարհ, միջազգային նորություններ
3. սոցիալ-տնտեսական խնդիրներ (տնտեսություն, գյուղատնտեսություն, ֆինանսներ, կրթություն, բնապահպանություն, մշակույթ, կրոն և այլն)
4. պատմական իրողություններ (ցեղասպանություն, երկրորդ համաշխարհային պատերազմ և այլն)
5. Ղարաբաղ, բանակցային գործընթացներ, Ղարաբաղյան պատերազմ, պաշտպանության հիմնախնդիրներ, ազգային անվտանգություն
6. ՁԼՄ-ներ/լրագրողներ
7. կենցաղ, հանցագործություն, քրեականություն
8. սպորտ
88. այլ
99. Դժվարանում են կողավորել

Հանդիպելով որևէ տիպի ոչ հանդուրժողական վերաբերմունքի՝ կողավորողը մուտքագրել է թե՛ վերաբերմունքի տիպը, և թե՛ վերաբերմունքի սուբյեկտը: Կողավորողների կողմից մուտքագրվել են յուրաքանչյուր հոդվածում այն սուբյեկտները (մինչև 5 սուբյեկտ), որոնց նկատմամբ արտահայտված է որևէ տիպի վերաբերմունք (յուրաքանչյուր սուբյեկտի համար մինչև 3 վերաբերմունքի հնարավորությամբ): Եթե մեկ հոդվածում միևնույն սուբյեկտի նկատմամբ միևնույն տիպի վերաբերմունքը դիտարկվել է մի քանի անգամ, ապա մուտքագրվել է միայն մեկը: Այդպիսով դիտարկվել են վերաբերմունքի հնարավոր դեպքերը և ոչ դրանց հանդիպման հաճախությունը հոդվածներում.

Մուտքագրվել են նաև բոլոր ամբողջությամբ հանդուրժողական հոդվածները:

“Վերաբերմունքի տիպ” փոփոխականն ունի հետևյալ արժեքները.

1. Ողջ հոդվածը հանդուրժողական է
2. Դրական վերաբերմունք (երբ շեշտադրված գովաբանում են որևէ մեկին)
3. Կանխակալ աջակցություն ի հաշիվ ուրիշի (Приоритетная поддержка за счет других)
4. Խտրականություն

5. Բացասական վերաբերմունք (այս կամ այն խմբի բացասական կերպարի ստեղծում, որը զուգակցված չէ ոչ կոնկրետ մեղադրանքներով՝ որոնց վերաբերում են մյուս կետերը)
6. պիտակավորում, հեզնանք, վիրավորանք, ծաղր
7. սպառնալիք, կոչեր ուղղված բռնությանը, խտրականությանը
8. այս կամ այն խմբին/անդամին ուղղված մեղադրանք հասարակության, պետության վրա բացասական ազդեցության շուրջ/ իշխանությունը զավթելու կամ այլ տիպի մեղադրանք
9. խտրականությունն ու հանցագործությունն արդարացնող արտահայտություններ
10. ոչ տղերանտ (կետ 3-9) արտահայտությունների ուղղակի կամ անուղղակի ցիտում առանց մեկնաբանությունների
11. դրական վերաբերմունքի ուղղակի կամ անուղղակի ցիտում առանց մեկնաբանությունների (կետ 2)
88. այլ
99. Դժվարանում եմ պատասխանել

Նախապես առանձնացված սուբյեկտների ցանկը հետագայում համալրվել է՝ արդյունքում դառնալով 54 տարբեր սուբյեկտ:

#### **Կողավորման սկզբունքները**

Տեղեկատվության վստահելիությունն ապահովելու նպատակով կողավորողներից յուրաքանչյուրը ռոտացիոն սկզբունքով կողավորել է տարբեր անուն թերթեր:

2 աշխատանքային շաբաթվա ընթացքում միաժամանակ աշխատել են 6 կողավորող: Յուրաքանչյուր հոդվածի կողավորման արագությունը կազմել է միջինում 30 րոպե:

Կողավորողների կողմից առանձնացվել և դուրս են գրվել նաև հետաքրքրություն ներկայացնող ամենատիպիկ արտահայտությունները, որոնք ամփոփված են աղյուսակ 7-ում:

#### **Վերլուծության մեխանիզմ**

Ստացված տեղեկատվությունն այնուհետև մուտքագրվել և մշակվել է SPSS վիճակագրական տվյալների վերլուծության ծրագրի միջոցով:

SPSS ծրագիրը հնարավորություն է տալիս վերլուծել քանակական տեղեկատվությունը, հաշվել յուրաքանչյուր փոփոխականի հանդիպման հաճախությունը, ինչպես նաև համեմատել ու փոխկապել տարբեր փոփոխականները միմյանց հետ:

**ՀԱՎԵԼՎԱԾ 2**

***Մոնիթորինգի ենթարկված տպագիր լրատվամիջոցների ցանկը***

Մամուլը	I շաբաթ	II շաբաթ
Հայկական ժամանակ	18.11.08	25.11.08
	19.11.08	26.11.08
	20. 11.08	27.11.08
	21. 11.08	28.11.08
	22. 11.08	
Առավոտ	18.11.08	25.11.08
	19.11.08	26.11.08
	20. 11.08	27.11.08
	21. 11.08	28.11.08
	22. 11.08	29.11.08
Հայաստանի Հանրապետություն	18.11.08	25.11.08
	19.11.08	26.11.08
	20. 11.08	27.11.08
	21. 11.08	28.11.08
	22. 11.08	29.11.08
168 ժամ	19.11.08	26.11.08
	21.11.08	28.11.08
	23.11.08	30.11.08
Новое время	18.11.08	25.11.08
	20.11.08	27.11.08
	22.11.08	

***Մոնիթորինգի ենթարկված էլեկտրոնային լրատվամիջոցների ցանկը***

Մամուլը	I շաբաթ	II շաբաթ
A1+	17.11.08	25.11.08
	18.11.08	26.11.08
	19.11.08	27.11.08
	20. 11.08	28.11.08
	21. 11.08	29.11.08
	22. 11.08	30.11.08
	23.11.08	
Armenia Today	17.11.08	24.11.08
	18.11.08	25.11.08
	19.11.08	26.11.08
	20. 11.08	27.11.08
	21. 11.08	28.11.08
	22. 11.08	29.11.08
	23.11.08	
Armenia Now	21.11.08	28.11.08
Zhamanak.com	18.11.08	25.11.08
	19.11.08	26.11.08
	20. 11.08	27.11.08
	21. 11.08	28.11.08
	22. 11.08	29.11.08
Ազատամտություն	18.11.08	25.11.08
	19.11.08	26.11.08
	20. 11.08	27.11.08
	21. 11.08	28.11.08
	22. 11.08	29.11.08